



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

14 մայիսի 2024 թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Մարատ Կնյազյանը, Ալիխան Համեյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Զասմ Մախմուդովը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի Ժ/պ՝ Արամ Խուդոյանը**

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 6-րդ մասերով և հիմք ընդունելով Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալազյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի N 4 հերթական նիստի օրակարգը.

- Ալազյազ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 4-ի N 25 որոշումը անվավեր ճանաչելու մասին,
- Ալազյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը աճուրդ վաճառքով օտարելու թույլատվություն տալու մասին:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29/

Լսեցին

**ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 4-Ի N 25 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Զեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով՝ Ալազյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Անվավեր ճանաչել Ալազյազ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 4-ի «Ալազյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը նվիրաբերելու մասին»



N25 որոշումը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30/

Լսեցին

**ԱԼԱԳՅԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՐՃԱԿԻՍ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏԵՎՈՂ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

*/Ձեկ. ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ/*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 68-րդ և 70-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.06.2020թ N 1023 որոշման պահանջները և Ալազյազ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Ալազյազ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է**

- 1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող Ալազյազ համայնքի Ճարճակիս վարչական բնակավայրի 7-րդ փողոց 1/3 հասցեում գտնվող 02-037-0014-0017 կադաստրային ծածկագրով 0.06052 հա բնակավայրային նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ 1 լոտով, աճուրդ-վաճառքով օտարել:
- 2.Հաստատել հողամասերի մեկնարկային գինը՝ 133144 (մեկ հարյուր երեսուներեք հազար հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, 1քմ 220 ՀՀ դրամ:
- 3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0


Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31/

**Ավագանու անդամներ**

- ՖԱՅՐՈ ԱԼԻՅԱՆ *[Signature]*
- ԶԱԼԻԼ ԽՈՒԴՈՅԱՆ *[Signature]*
- ՌԵՐՈ ՄԱԽՄՈՒԴՈՎ *[Signature]*
- ՍԵՐԺԻԿ ՄՈՒՐԱԴՈՎ *[Signature]*
- ԱՆՁՈՐ ՇԱԲՈՅԱՆ *[Signature]*
- ՇԻՐԱԼԻ ԶՈԼՈՅԱՆ *[Signature]*

Համայնքի ղեկավար  
ԶԱՍՄ ՄԱԽՄՈՒԴՈՎ *[Signature]*



Նիսպն արձանագրեց՝ Արամ Խուրդյանը 

---